

ՍԵՌԱՅԻՆ ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ

Կը խորհիմ թէ ժամավաճառ եղած չենք ըլլար, եթէ նախապէս սկիինք ծանօթանալ ծննդական գործարաններու կազմին և պաշտօնավարութեան:

Այս մասին մեր ծանօթութիւնները կը պարտինք Պրաուն-Սէքարի փորձապական և գիտական հետախուզութիւններուն: Այսօր գիտենք թէ ամորձիքները զոյգ գեղձեր են որ կրկնակ ծորում ունին. մին արտաքին ծորում որ կը կազմէ սերմնակենդանները, աճումի և ծննդագործութեան անհրաժեշտ տարրը. միւսը ներքին՝ որ իր իշխանութեան տակ կը պահէ աճումի և ծննդագործութեան յատուկ նոյն տարրերուն կանոնաւոր պատրաստութիւնը և անոնց անաղարտ պահպանումը: Պէտք է գիտնալ որ այս ներքին ծորումը կ'ապահովէ նա՛հ. ծննդական կազմուածքին և օժանդակ գեղձերուն աճումը և միեւնոյն ժամանակ կամաքին, մազերուն, ատամներուն, ձայնական գործարաններուն, սեռական բնազդին և առնանդամին ներդաշնակ զարգացումը և համեմատական բարգաւաճումը: Մերերուն մօտ սեռական բնազդին նուազումը և անհետացումը կը նշանակէ այդ ներքին ծորումը արտադրող անջրպետային հիւսուածքին այլաոերումը և կամ բոլորովին ցամքիլը:

Կենդանիներու վրայ փորձով հաստատուած է որ երբ սերմնային խողովակները կապուին կամ Ռէօնթիէնեան ճառագայթներով ջնջուին, սեռային բնազդը անփոփոխ և անաղարտ կը մնայ, իսկ եթէ անջրպետային հիւսուածքը ջնջուի, զայն սնուցանող սերմնային շընչերակը կապելով, սեռային բնազդը կ'անհետանայ և եթէ փորձի ենթարկուող կենդանին մատղաշ է, անոր մազերը կը բարակնան և կը ցանցառնան, կմախքը աններդաշնակօրէն կ'աճի, դէպ 'ի լայնութիւն կը նուազի և ընդհակառակն դէպ 'ի երկայնքը անհամեմատօրէն կ'երկարի և միեւնոյն ժամանակ ձայնին հնչականութիւնը կը պակսի: Ահա թէ ի՞նչու համար ներքինիները աւելի երկարահասակ են, անոնց վերին ու ստորին ատամները շատ երկնցած և ձայներնին ուր և ճշող է:

Ներքնածորումի տարաժամ անհետացումին կը հետևին հոգեկան և նկարագրի խանգարումներ: Ենթական մեղամաղձօտ և վշտահար երեւոյթ կը ոտանայ, խելագարութեան և անձնապահութեան դէպքեր նկատուած են: Եւ ընդհակառակն այդ հիւսուածքներու գերաճումին ենթակայ անձերը կը լինին ջղադրգիւ և չափազանցօրէն տարուած իրենց սեռային ցանկութիւնները ամէն միջոցով յագեցնե-

լուս. Երկու հակընդդէմ ծայրայեղութիւններ, որոնք կը խանգարեն կեանքի ներդաշնակութիւնը և վայելքները:

Ներքին և արտաքին թունաւորումները շնասակար ազդեցութիւններ և երբեմն անբուժելի խաթարումներ կը թողուն ամորձիքներու կազմուածքին վրայ և կը դատապարտեն մարդը ամլութեան կամ սեռային վայելքէ ժամանակաւոր կամ 'ի սպառ զրկումի: Ներքին թունաւորումներու մէջ յիշենք չաքարախտը, սիֆիլիզը, ստամոքսային և ընդերական հիւանդութիւնները: Արտաքին թունաւորումի կը վերաբերին ալքոլամոլութիւնը, ծխամոլութիւնը, մորֆինաւափոխամոլութիւնը, հալիշամոլութիւնը, և այլն: Այս թունաւորումները կ'ենթարկեն մարդը անկարողութեան, որ սովորաբար կրնայ դարմանուիլ և բուժուիլ, եթէ այդ թունաւորումները հիւսուածային խորունկ խաթարումներ չեն պատճառած: Սեռական անկարողութիւն կը նկատուի նաև երբեմն այն անձերուն վրայ որոնք գիւրայոյզ են և որոնց ջղային գրութիւնը տկարացած է չափազանցեալ մտային աշխատանքով կամ անբաւական և անյարմար սննդառութեամբ: Այս վիճակը ո'ւէ՛ առնչութիւն չունի ամորձիքներու կազմական խանգարումի: Կետ: Այս կարգի անկարողութիւնը կը բուժուի կազդուրիչ զեղերով, մարզանքներով և հոգեբնաբուժական (psycho-physiotherapie) միջոցներով:

Գալով ջերմամիզութեան, եթէ վաղօրօք չդարմանուի, այս ախտին ծնունդ տուող մանրէները կ'երթան կը տեղաւորուին ամորձիքներու և անոնց օժանդակ գործարաններու հիւսուածքներուն մէջ, կը խաթարեն սերմնածին քլիջները և կը ցամքեցնեն ակը սերմնակենդաններու, ահա այն ատեն ենթական անպայման կը դատապարտուի ամլութեան, որ բացարձակապէս անբուժելի է:

Այս ծանօթութիւնները ստանալէն յետոյ՝ անդրադառնանք մեր առաջագրութեան:

Սեռական յարաբերութեան բուն նպատակն է ծննդագործումը և ցեղին յարատեւութեան ապահովումը: Այս գործողութեան հետ կապուած է հեշտանք մը, որպէսզի ամէն կենդանի էակ այդ հեշտանքին դրդուած՝ գործադրէ զայն, ինչպէս մարտողական գործարաններու դրան սեմին վրայ զետեղուած են ճաշակելու զգայարանքի յատուկ գործարանները՝ քիմքը և լեզուն, որոնցմով մարդ՝ ճաշակելու հաճոյքը կ'ունենայ եւ այդ վայելքի փափաքով կը ներմուծէ պէտք եղած սնունդը դէպ 'ի ներս մարտողական գործարաններու մէջ, պահպանելու համար կազմուածքին զարգացումը և կենսական ուժը: Դժբախտաբար գործնականին մէջ, ինչպէս կերակուրի ճաշակին հաճոյքը, նոյնպէս սեռական յարաբերութեան հեշտանքը առա-

Ղին եւ կարեւորագոյն տեղը գրաւած են եւ բուն նպատակը յաճախ անտես առնուած է։ Այսպէս սեռական յարաբերութիւնը եղած է ընդ հեշտանքի լրութեան յարաբերութիւն։ Եւ այս մոլոր մտայնութիւնը եւ ընդունուած ֆեմտակար սովորութիւնը հետեւանք տուած են բարձրեւոր ապականութեան, վեներական հիւանդութիւններու ծաւալման, մտային խանգարումներու եւ ջղային ախտերու բազմանալուն եւ ցեղին ֆիզիքական այլատերութիւն։

Գիտեմ թէ գիւրին գործ չէ ցանկութիւններուն չափ գնելը, և թէ յաղթանակներուն մեծագոյնն է կիրքերը սանձահարելու յաջողութիւնը։ Այո՛, գծուարին է, բայց անկարելի չէ՝ վերեւ տեսանք թէ ծննդական գործարանները ի՛նչ կարեւոր և կենսական պաշտօններ ունին կատարելիք մեր առողջութեան պահպանումին և կազմուածքի զարգացումին։ Կամար Ջանոնք ճանչնալով՝ գիւրին է ըմբռնել թէ որքա՛ն խոհեմութեամբ պարտաւոր ենք հսկել անոնց վրայ և գործածել զանոնք։ Վարդի փունջի մը պէս փափուկ են անոնք, որքան զգուշաւոր խնամքով պահէք այդ ծաղկեփունջը, այնքան ուշ կը թռա՛ի և այնքան երկար առեն կը վայելէք անոր բուրումը։ Որքան չափաւորութեամբ գործածէք ձեր ծննդական գործարանները, այնքան երկար առեն ՚ի վիճակի կ'ըլլաք վայելելու անոնց ձեզ ընծայած հեշտանքը և մանաւանդ այնքան երկար առեն կ'ընաք զայն իր բուն եւ բարձր նպատակին համար գործածելու պատրաստ պահել։ Այս մասին յաջողելու համար միջոցներ չեն պակսիր. մարմնամարզ, ձեռական աշխատանքներ, պարտիզպանութիւն, ևայլն. ընտրեցէ՛ք ասոնցմէ մին և զբաղուեցէք. հեռի կեցէք ջիղերը և միտքը գրգռող առիթներէ, լպիրշ վէպերու ընթերցումէ, հասարակաց տուներու մէջ տեղի ունեցող պարերէ, խորշանք յայտնեցէք ձեր ընկերներու խենչ յարաբերութիւններու պատմութիւնը լսելէ, և մանաւանդ զգուշացէք մտքով և ձեռքերով ձեր ծննդական գործարանները գրգռելէ։

Կան ոմանք որոնք կը կարծեն թէ սերմի հաւաքումը սերմընկալ փամփշտիկներու մէջ ֆեմտակար է առողջութեան և թէ զուգաւորութեամբ անպայման պարպել պէտք է զայն։ Սխալ ըմբռնում։ Հոն հաւաքուած սերմը պահետի սնունդ մըն է ձեր ջիղերուն և ձեր ուղեղին համար։ Բնութեան հրաշալի տնօրինութեամբ ան կը վերածծուի այդ ընդունարանին մէջ և կ'երթայ կազդուրել ձեր ջղային գրութիւնը, զօրացնել ձեր միտքն ու յիշողութիւնը և գիւրացնել ձեր մտաւոր աշխատանքներուն յաջողութիւնը։

Թերեւս ոմանք առարկեն թէ ժուժկալութեան դէմ բնութեան ըմբոստացումը չէ՞ գիշերային սերմնահոսութիւնը։ Ո՛չ երբեք, սո-

վորաբար այդ երեւոյթը հետեւանք է գրգռիչ երազներու կամ ծածկոյթներու չփումին:

Մեր նախահայրերը սննդական պահեցողութիւններու հետ, պահեցող էին նոյն չափով սեռական յարաբերութիւններու մէջ: Շարժուման մէկէ աւելի օրերուն մէջ, չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակ-նամտի երեկոնները ժուժկալ կը մնային: Եւ որքա՛ն աւելի ֆիզիքապէս զօրաւոր եւ աւելի երկարակեաց էին քան մենք, և կը վայելէին առոյգ ծերութեան մը ցանկալի շրջանը:

Մի՛ խորհիք թէ մտացածին անհիմն խրատներ կը հրամցնեմ ձեզ: Մտքէս չանցնիր բնաւ զձեզ հրաւիրել վանականի կեանքը ընդ-գրկելու. ո՛չ երբեք, եւ շատ անբնական կը գտնեմ կուսակրօն կեանքը, կը խորշիմ ծայրայեղութենէ, այլ կը մաղթեմ որ ճանչնաք ժուժկալութեան բարիքները, որպէսզի աւելի երկար առեն կարենաք վայելել ձեր սեռային բնազդը և մանաւանդ ձեր յառաջացած տարիքին մէջ անգամ ի վիճակի ըլլաք զայն իր բուն նպատակին ծառայեցնելու:

Կը կրկնեմ. ծննդագործելու բարձր նպատակէն դուրս մի՛ գոր-գոէք ձեր սեռական բնազդը, ժուժկալ և չափաւոր եղէք վայելելու մէջ անոր յարակից հեշտանքը:

Շամբինսի

ԲԺ. Բ. ՈՍԿԻ

ՁԵՐ ԳԼԽՈՒՆ ԶԱՐԸ

Այս խորագրին տակ մեր պաշտօնակիցը՝ «*Le Foyer*» իր վերջին Թիւերէն մէկուն մէջ խմբագրական մը նուիրած է Ֆրանսահայ գաղութին մէջ Թողախտի դէմ պայքարին: Ակնարկելէ ետք այդ մասին ՏԶԹ. Գրիգորեանի եւ քօլօլեանի պատրաստած մանրամասն ուսումնասիրութեան եւ նախագիծին, նիւթական անհրաժեշտ միջոցները ապահովելու համար կ'առաջարկէ «փոխադարձ օգնութեան սկզբունքով Ցամբայ ելլել», եւ Թողախտին դէմ տեսակ մը ապահովագրական ընկերութիւն կազմել:

Ուրախ ենք որ Թողախտի դէմ փոխադարձ օգնութեան ընկերակցութիւն մը կազմելու առաջարկը, զոր առաջին անգամ ըրած էինք երկու տարի առաջ «Բուժանք»ի մէջ (Թիւ 9), եւ կրկնած էինք վերոյիշեալ տեղեկագրին մէջ, այժմ արծագանգ կը գտնէ:

Դժբախտաբար այդ տեսակ առաջարկներն ու կոչերը դատաւ. պարտուած են ամուլ մ'նալու, որքան առեն որ խնդիրը գործնական գետնի վրայ չէ դրուած ու վստահելի անձերէ մարմին մը չէ կազմուած, որոշ հիմնադրամով:

Այս ուղղութեամբ պէտք է քանք Թափել: